

Անգեղակոթ

Բնակչություն՝ 1860

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 104 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1840 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Անգեղակոթը գտնվում է Որոտանի ձախափնյա բարձրադիր սարավանդի վրա, համարվում է Հայաստանի հնագույն բնակավայրերից, թեև հիմնադրման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Գյուղի տարածքում հայտնաբերվել են նեոլիթի և բրոնզի դարի դոլմեններ, շրջակայքում կան մ.թ.ա. 8-1 հզմ. դամբարանադաշտեր, բազմաթիվ խաչքարերով գերեզմաններ, ջրաղացների համակարգ, կիկլոպյան ամրոցի հետքեր, գյուղատեղիներ: Միջնադարյան նշանավոր հուշարձաններից է սբ Ստեփանոս, սբ Աստվածածին, սբ Հագարափրկիչ եկեղեցիները և մատուռները:

Անգեղակոթը գտնվելով Շաղաթ մայրաքաղաքի շրջակայքում, նշանավոր էր դեռևս 5-րդ դարում: Այստեղ է հիմնվել մարզպան Վասակ Սյունիս, այստեղ է գտնվում «Վարդան զորավար» սրբավայրը, որտեղ սրտ պատմաբան Մարուս Հասարթյանի, թաղված է հայոց մեծ զորավար Վարդան Մամիկոնյանը, որի դին այստեղ են բերել (451թ.) Ավարայրից վերադարձող զորքերը:

Միջին դարերում Անգեղակոթը Սյունիքի հոգևոր ու մշակութային, ապա նաև՝ վարչական կենտրոններից էր: 16-17-րդ դարերում այն մելիքանիստ էր, նույնիսկ անվանվում էր գյուղաքաղաք: Այստեղ ընդօրինակվել են ավետարաններ, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, բազմաթիվ ձեռագրեր, այստեղ է գործել նշանավոր Շմավոն Անգեղակոթցի վարդապետը: Անգեղակոթում 1699թ. հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իրայել Օրու գլխավորությամբ կայացել է Անգեղակոթի ժողովը:

Անգեղակոթը 1750-ական թվականներից անկում է ապրել, իսկ 1797թ. Աղու-Մահմեդ խանի երկրորդ արշավանքից հետո դատարկվում է: Վերաբնակեցվում է 1828-30թթ.՝

Պարսկաստանի Խոյ և Սալմաստ շրջաններից (հիմնականում Ղարաքյավջան գյուղից) գաղթած հայ բնակիչներով, որոնք հիմնում են նոր Անգեղակոթը: 1930-ական թվականներին Անգեղակոթից մի քանի տասնյակ ընտանիքներ տեղափոխվել և բնակություն են հաստատել Շաքի, Սպանդարյան և Սառնակունք գյուղերում:

Անգեղակոթում են ծնվել գիտությունների դոկտորներ՝ Վահան Բաղայանը, Տիգրան Մովսիսյանը, ՀՀ գյուղնախարար Գևորգ Ստեփանյանը և ծանրամարտի օլիմպիական խաղերի ու աշխարհի չեմպիոն Օգեսն Միրզոյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Գյուղատնտեսությամբ զբաղվում է 532 գյուղացիական տնտեսություն:

Անասնազլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.

- խոշոր եղջերավոր անասուններ՝ 1063գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 2140գլուխ,
- խոզեր՝ 150 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 240:

Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 450 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 9851 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9244 հա, որից՝
- վարելահող՝ 1513 հա, բազմամյա տնկարկ՝ 12 հա, խոտհարք՝ 2 հա, արոտ՝ 2559 հա, այլ հողատեսք՝ 5158 հա
- բնակավայրերի հողեր՝ 292 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 17 հա
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 17 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 33 հա,
- անտառային հողեր՝ 173 հա, որից անտառածածկ՝ 145 հա
- ջրային հողեր՝ 75 հա